

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵՄԱԹԻ ՓԵՅՄԱՆԵՅ ՄՈՂԱՄԱԴԴԻ

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ
ԱՆԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ՎԱՐՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
(ԻՐԱՆՑԻ ԿԱՆԱՆՑ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ.00.01.-«Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր
Վլադիմիր Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր
Մելսիկ Մկրտումյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու,
Ռուբեն Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝

Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 14⁰⁰-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՅ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թվականի նոյեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կ.Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ամբողջ աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրթական և այլ համամարդկային արժեքների վերախմաստավորման գործընթացը որոշակիորեն ազդում են ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ առանձին մարդկանց առողջ կենսակերպի վրա (Mets, M.e. & Pryor J.L.): Առողջ կենսակերպի ապահովումը մեծ հիմնախնդիր է թե տեսական, թե գործնական առումներով: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) սահմանման՝ առողջությունը մարդու ֆիզիկական, հոգևոր և սոցիալական բարենպաստ վիճակն է, այլ ոչ թե հիվանդությունից կամ ֆիզիկական թերություններից զերծ մնալը: Ինչպես հայտնի է առողջ կենսակերպը ներառում է մարմնական, ֆիզիկական, հոգեկան, սեռական, բարոյական բաղադրիչներ, որոնք կապված են միմյանց հետ (Bartlik, B. & Goldstein, M.Z.): Առավել ուշագրավ է առողջ կենսակերպի հոգեբանական և սեռական ակտիվության հնարավոր կապերի հիմնախնդիրը ընտանեկան կյանքի և ամուսնական հարաբերությունների պայմաններում (Mc Cabe, M.):

Իրանի Իսլամական Հանրապետության երիտասարդ կանանց շրջանում կատարած համալիր ուսումնասիրությունները հանգեցնում են այն գաղափարին, որ սեռական անբավարվածության երևույթը դիտարկելիս անհրաժեշտ է զգալիորեն ընդլայնել հոգեբանական ուսումնասիրությունների շրջանակը այն հաշվով, որպեսզի ոչ միայն հնարավոր լինի պատկերացնել այդ խնդրի հոգեբանական դրվածքը, այլև կոնկրետ լուծումներ առաջարկել ոչ միայն կանանց, այլև սեռական անբավարվածությամբ զբաղվող պրակտիկ մասնագետներին: Հասարական կյանքի տարաբնույթ կողմերի աննախադեպ զարգացումներն ինչպես աշխարհում, այնպես էլ Իրանի Իսլամական Հանրապետությունում որոշակի փոփոխություններ մտցրին ամուսնական և ընտանեկան հարաբերությունների ոլորտում (Նեմաթի Փեյմանեհ):

Հետազոտության նպատակը: Բացահայտել հոգեբանական համալիր գործոնների ազդեցությունը ԻԻՀ կանանց սեռական անբավարվածությամբ պայմանավորված վարքային դրսևորումների վրա:

Հետազոտության օբյեկտը սեռական անբավարվածության հոգեծին գործոնների ազդեցությամբ պայմանավորված ներընտանեկան և ամուսնական հարաբերությունների ինչպես խաթարման, այնպես էլ հոգեբանական խորհրդատվության հնարքներով սեռական հարաբերությունների կարգավորման գործընթացներն են:

Հետազոտության առարկան սեռական անբավարվածության հոգեծին գործոնների համաժամանակյա ազդեցությամբ տարաբնույթ գործընթացներն են՝ սեռական հարաբերությունների կարգավորման և ակտիվացման պայմաններում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ՝ ա) իրանցի կանանց հոգեբանական գործոններից կախված սեռական անբավարարվածության պատկերացումները և վարքի դրսևորումներն իրենց գործառույթային առանձնահատկություններով պայմանավորում են ընտանեկան պայմաններում դրսևորվող իրավիճակային տազնապայնության, ֆիզիկական, խոսքի, զայրույթի և թշնամանքի ազրեսիայի արտահայտվածությունը և անձնային ուղղվածության շեշտադրումների համաժամանակյա ազդեցությունը, բ) անձնային գործոնները կապված են կանանց սեռական անբավարարվածությունը բնութագրող հեշտոցային կծկումների ցավերի, սեռական հարաբերությունից խուսափման, սեռական հարաբերությունների բնույթի և հաճախականության, սեռական հաճույքի զագաթնակետին հասնելու հետ, գ) սեռական անբավարվածություն ունեցող կանանց շրջանում իրականացվող նպատակամետ հոգեբանական աշխատանքները՝ ի հաշիվ նրանց սեռական կյանքին վերաբերող պատկերացումների ընդլայնման և ամուսինների հարաբերությունների պարզաբանման, էապես ազդում են ոչ միայն կանանց՝ ամուսնու հետ ունեցած սեռական հարաբերությունների կարգավորման, այլև նրանց ինքնագնահատականի բարձրացման վրա:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետևյալ խնդիրները.

1.վերլուծել սեռական անբավարվածության և խաթարված ամուսնական հարաբերությունների բնագավառին վերաբերող մասնագիտական գրականությունը;

2.հավաստող գիտափորձով բացահայտել իրանցի կանանց սեռական անբավարվածության բնույթը, բովանդակությունը, հոգեբանական գործոնները և առկա կոնֆլիկտով պայմանավորված դրսևորումները;

3.ուսումնասիրել հետազոտվող կանանց հաղորդակցական կարողությունը, իրավիճակային և անձնային տազնապայնության և ազրեսիայի հնարավոր դրսևորումները ամուսնական հարաբերություններում;

4.մշակել կանանց սեռական բավարարվածության իրագեկվածությանը միտված կողմնորոշիչ ծրագրեր՝ թրենինգային և անհատական խորհրդատվության ընձեռած հնարավորություններով;

5.մշակել և անցկացնել ինքնագզացողությանը և սեռական հարաբերությունների կարգավորմանը միտված հոգեծին գործոնների ակտիվացման գործընթացներ;

6. ստուգիչ գիտափորձով ապացուցել կիրառած մեթոդների հավաստիությունը և ստացած արդյունքների հուսալիությունը փորձարարական խմբերում:

Չետազոտության համակազմը ներառել է Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի հոգեբանական խորհրդատվական (հոգեբանական միջամտություն և հոգեբանական ուղեկցում) կենտրոն դիմած սեռական անբավարվածության խնդիր ունեցող 105 կին, ովքեր չեն ունեցել սոմատիկ և հոգեկան հիվանդություններ: Նախնական հետազոտության փուլում պարզվեց, որ նշված թվաքանակով կանայք, իրենց տարբերություններով հանդերձ, ունեն սեռական անբավարարվածության նույնատիպ դրսևորումներ: Բացի դրանից, հաշվի են առնվել կանանց կրթությունը, զբաղվածությունը, ընտանիքի կազմը, տարիքը, ամուսնական կյանքի տևողությունը և այլն, որոնց հիման վրա առանձնացվել են 20 կին՝ հետագա ուսումնասիրությունների համար:

Չետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել ժամանակակից հոգեբանության տեսական դրույթներն անձնավորության լիարժեք ձևավորման և զարգացման վերաբերյալ, իրանական ընտանիքի ժամանակակից հարացույցը, կնոջ դաստիարակության նորմերը(հայեցակարգեր) ու հետազոտությունները, հոգեբանական -խորհրդատվական գործընթացների ուսումնասիրության փիլիսոփայական-իմացաբանական տեսությունը, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպման մեթոդաբանությունը, ներընտանեկան և ամուսնական հարաբերությունների նկատմամբ համալիր և անձնակողմնորոշիչ մոտեցման սկզբունքները: Մեթոդաբանական առումով կարևորվել են նաև այն տեսությունները, որոնք պարզաբանում են մարդու էությունը՝ որպես իր կյանքի հետազոտող, որը բնականաբար վերաբերում է նաև կնոջ ամուսնական և սեռական հարաբերություններին:

Չետազոտության մեթոդները: Ատենախոսության առաջադիր հիմնախնդրի լուծման և վարկածի հաստատման նպատակով հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական աշխատությունների հայեցակարգերի տեսական վերլուծություն, ախտորոշիչ (անկետավորում, թեստավորում, զրույց, հարցազրույց, ինքնագնահատում, դիտարկում, հետազոտում), փորձարարական գիտափորձեր(հաստատող, ձևավորող և ստուգիչ), ստացված արդյունքների վիճակագրական մշակում և վերլուծություն, համեմատություն և ընդհանրացում:

Ատենախոսության գիտական նորույթը: Մասնագիտական գրականության տեսական վերլուծությամբ և փորձարարական ուսումնասիրությունների արդյունքներով բացահայտվել է իրանցի կանանց սեռական անբավարվածության հոգեծին գործոնների

համաժամանակյա ազդեցության ուղղվածությունը, իսկ մշակված և ներդրված կողմնորոշիչ ծրագրերը նպաստել են կանանց հետ տարվող հոգեբանական աշխատանքներին, որոնց արդյունքում վերացվել կամ նվազագույնի են հասցվել կանանց սեռական անբավարարվածության վարքային դրսևորումները: Բացահայտվել են նաև իրանցի կանանց սեռական անբավարարվածության և նրանց անձնային առանձնահատկությունների հնարավոր կապերի դրսևորումները: Կազմակերպվել են անհատական և խմբային խորհրդատվություններ՝ ուղղված սեռական բավարարվածության ակտիվացմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հոգեբանական տեսական և ավանդական պատկերացումների շրջանակում դեռևս բավարար չափով չեն լուսաբանվել սեռական անբավարարվածության հոգեբանական հիմնախնդիրը՝ անկախ այդ ոլորտում գոյություն ունեցող առկա սեքսոպաթոլոգիական և կենսաբանական մոտեցումների և հրամցվող լուծումների բազմազանությունից: Տեսական հետազոտության տվյալները կարող են որոշակիորեն լրացնել այս բնագառում դեռևս չմեկնաբանված մոտեցումները և նոր լույս սփռել հոգեբանական գործոններով պայմանավորված սեռական անբավարարվածության հոգեբանական հիմնախնդրի ընկալման գործընթացում: Շեշտդրելով իրանցի կանանց սեռական կյանքի պատկերացումների ընդլայնման և սեռական առողջ կյանքին միտված վարքի նոր ձևերի ընտրության հնարավորությունը՝ նոր երանգ է ստանում նրանց ընտանեկան և ամուսնական հարաբերությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքների գործնական ներդրումը հոգեբանի խորհրդատվական գործունեության մեջ նշանակալի դրական տեղաշարժեր կարձանագրի իրանցի կանանց սեռական հարաբերություններում՝ ազդելով նաև նրանց ինքնագագացողության և հոգեկան առողջության տարաբնույթ բաղադրամասերի վրա: Հետազոտության շրջանակում ցույց են տրված խմբային և անհատական աշխատանքի նրբությունները, որոնք էական դեր կկատարեն հոգեբան-խորհրդատուի գործնական աշխատանքում:

Հետազոտության արդյունքները ներդրվել են Իրանի մի քանի հոգեբանական խորհրդատվական կենտրոններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Սեռական անբավարարվածության համալիր խնդիրը մեթոդաբանական առումով հանգում է հոգեծին գործոնների տարանջատման, դրանց ազդեցության որոշման և վարքային դրսևորումների բացահայտման: Սեռական

անբավարարվածությունն ընդհանրական իմաստով դիտարկվում է որպես հոգեծին գործոններով պայմանավորված սեռական կյանքին վերաբերող պատկերացումների և դրանց համապատասխանող վարքային դրսևորումների յուրահատուկ շղթա:

2. Սեռական անբավարարվածությամբ կանանց հիմնախնդիրը բազմաշերտ կառույց է, որի ուսումնասիրման արդյունավետությունը բնութագրվում է կանանց սեռական պահանջումների բավարարման միտված իրազեկվածության աստիճանով, անոթխածության հաղթահարմանն ուղղված հնարքների ինացությամբ, ինքնագնահատականի բարձրացմամբ և տազնապախոզվության նվազեցմամբ:

3. Սեռական անբավարարվածության խնդրի հոգեբանական բաղադրիչի ակտիվացումը կախված է կանանց շրջանում տարվող նպատակամետ հոգեբանական աշխատանքների կազմակերպման մակարդակից, անհատական և խմբային աշխատանքներում կիրառած հոգեբանական միջոցների համարժեք ընտրությունից:

4. Սեռական անբավարարվածության բացահայտմանն ուղղված Գոլոմոգրաստի մեթոդիկայի զուգակցումը հոգեծին գործոնների պարզաբանմանը միտված այլ մեթոդիկաների հետ՝ հոգեբանական կարևորագույն պայման է կանանց անհատական և խմբային խորհրդատվության արդյունավետ կազմակերպման համար:

Չետազոտության հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովված են հիմնախնդրի առաջադրման համալիր մոտեցմամբ, հիմնարար տեսամեթոդաբանական դրույթների գիտական հիմքով, հետազոտության կառուցվածքային բաղադրամասերի գիտականորեն հիմնավորված տրամաբանությամբ, հետազոտության նպատակին ու խնդիրներին համահունչ մեթոդների կիրառմամբ, կարևորագույն գաղափարների հոգեբանական հիմնավորումներով և եզրահանգումներով, դրված խնդիրների լուծման համար օգտագործված մեթոդների համալիրով, անցկացված փորձարարական աշխատանքների արդյունքներով և հեղինակի անձնական մասնակցությամբ: Չավաստող և ուսուցանող գիտափորձի տվյալները մշակվել են SPSS – 20 ծրագրով՝ արդյունքների կապերի բացահայտման նպատակով:

Չետազոտության փորձաքննությունը կատարվել է Երևանի պետական համալսարանում, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնում, Գյումրու մանկավարժական ինստիտուտի հոգեբանական ծառայությունում և ՀՀ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը՝ 174 համակարգչային էջ: Աշխատանքը ներառում է 3 հավելված, 3 աղյուսակ, 3 նկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության խնդիրները, նպատակը, օբեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքերը, առանձնացվել են հիմնական գիտական արդյուքները և նորույթը, ինչպես նաև նախանշվել են վերջիններիս գործնական կիրառության հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Կանանց սեռական անբավարարվածության հոգեբանական հիմնախնդրի բովանդակային վերլուծություններ»**, գլխում կատարվել է տարբեր վերլուծություններ սեռական կյանքի մասին: Առաջին՝ **«Կանանց սեռական անբավարարվածության տարաբնույթ պատճառների փաստական դիտարկումներ»** ենթագլխում դիտարկվում են ուսումնասիրություններ սեռական կյանքի մասին: Օրինակ, Դ.Բենկոֆթը, մանրամասն ուսումնասիրելով 35-45 տարեկան ամուսնացած անգլուհիներին, պարզել է, որ նրանց 30%-ը օրգազմ չի ունեցել, իսկ հետազոտվողների կեսը նշել է, որ մոտիկությունն անդուր է, տհաճ: Կանանց 80%-ը նշել է, որ չի կայացել իրենց ինտիմ կյանքը, իրենց սպասումներն ամուսնական կյանքից չի արդարացվել, և իրենք ափսոսում են բաց թողնված հնարավորությունները, որ ժամանակին չեն կապվել այլ տղամարդու հետ: Ռուսաստանի 3 խոշոր քաղաքներում սեռական անբավարարվածության ոլորտում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասուն կանանց 28%-ը երբեք օրգազմ չի ունեցել, կանանց 30 %-ը կանոնավոր այն չի ստացել յուրաքանչյուր հարաբերության ընթացքում, միշտ կամ համարյա միշտ օրգազմի հասածները կազմել են 42%: Բավարված կանանց մի մասը գտնում էր, որ նրանք այդ վիճակին հասել են որոշ ժամանակ անց, որը տևել է տարիներ անց: Մինչդեռ տղամարդկանց առավելագույն ինքնազագոցողությունը, որպես կանոն, կարող է արտահայտվել նույնիսկ առաջին մերձեցման պայմաններում:

Երկրորդ՝ **«Ձույգերի անտեղեկացվածությունը որպես սեռական անբավարարվածության կարևորագույն դրսևորում»** ենթագլխում ցույց է տրվում, որ սեռական անբավարարվածության խնդիրների պատճառները կապված են ինչպես օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակի (հիվանդություններ, պոտենցիայի նվազում և այլն), այնպես էլ հոգեբանական գործոնների (հուզական սառնություն, քնքշանքի բացակայություն, ջերմ հարաբերություններ և այլն) հետ, մինչդեռ վերջիններս էական դեր են կատարում նորմալ սեռական հարբերությունների դրսևորումների համար:

Երրորդ՝ **«Կանանց սեռական խնդիրների առաջացման հիմնական գործոնները»** սեռական հոգեծին հիմնախնդիրների վրա ազդող հոգեբանական գործոնները պայմանականորեն բաժանվել են երեք մեծ խմբի՝ նախադրյալային գործոններ, բացահայտման գործոններ (տազնապ և դեպրեսիա), պահպանողական գործոններ:

Բացահայտվում է նյարդային համակարգի դերը սեռական ակտիվության հարցում, առանձնացվում են մի շարք գործոններ, որոնցից են՝ պատճառային-ճանաչողականը, կենսաբանականը, հորմոնների ազդեցությունը, դեղամիջոցները և տարբեր հիվանդությունները (քաղցկեղներ, կանանց վիրահատություններ, խրոնիկ հիվանդություններ), ինչպես նաև տարիքը, վարակաբանությունը, ուղղությունը և նախատեղեկությունը: Դիտարկվում են տարբեր հայացքներ սեռական խանգարումների վերաբերյալ, որոնցից են՝ հոգեվերլուծական, վարքագիտական և կոգնիտիվ տեսակետները:

Պարզվում է, որ հիմք ընդունելով սեռական անբավարարվածության հոգեծին գործոնները՝ կարելի է տարանջատել դրանց համակարգված գործառույթներին ուղղված կապերի դրսևորումները, որոնք հնարավոր են փոփոխությունների ենթարկել սեռական կամ ընտանեկան հարաբերությունների կայունացման և զարգացման ընթացքում: Այս իմաստով, ավելի շատ հակված ենք տարանջատել սեռական անբավարարվածությանը միտված նախադրյալային, բացահայտողական, պահպանողական և հարաբերությունների հստակեցման գործոնները, որոնք ենթակա են առավելագույնս շտկման և կարգավորման՝ քանի որ դրանք դրական ազդեցություն ունեն սեռական անբավարարվածության խնդրի արդյունավետ լուծմանը միտված ուղիների բացահայտման վրա:

Երկրորդ՝ **«Հավաստող գիտափորձի նպատակը, ընթացքը և հիմնական արդյունքները»** գլխի առաջին՝ **«Իրանցի կանանց սեռական անբավարարվածությանը պայմանավորված հոգեբանական դժվարությունները»** ենթագլխում պարզվել է սեռական անբավարարվածության հոգեծին խնդրով պայմանավորված կանանց վիճակը ամուսնական հարաբերություններում: Կիրառվել է հոգեբանական մեթոդների մարտկոց՝ նպատակ ունենալով գնահատել սեռական հոգեծին խնդիրներ ունեցող կանանց տագնապայնությունը, ագրեսիայի վիճակը և սեռական անբավարարվածության աստիճանը: Գիտափորձին մասնակցել է 20 կին, 20-45 տարեկան(յուրաքանչյուր տարիքից 1 կին, իսկ 31, 32, 39 տարեկանից՝ 2 կին), որոնք բժշկական խնդիրներ չեն ունեցել և մասնագետ բժիշկների խորհրդով դիմել են հոգեբանական օգնության: Նրանք գրանցվել են 2010 թվականի հունվարից և նրանց հետ հոգեբանական աշխատանք է տարվել մինչև 2011 թվականի սեպտեմբերը:

Հայտնի է, որ ընտրանքի միջին սխալը կախված է ընտրանքի ծավալից և որոշակի հատկանիշի վարիացիայի (փոփոխությունների) աստիճանից: Այդ պատճառով մեր հետազոտության մեջ, հենց սկզբնական փուլում, հաշվել ենք ընտրանքի ծավալը, որպեսզի դրանով ապահովենք դիտարկումների արդյունքների պահանջվող ճշգրտությունը՝ հավանականության տեսության պահանջներին համապատասխան: Այս

նպատակով նշենք, որ ընտրանքի թողարկումը կախված է 3 պայմանների

- ա) առաջադրված ճշգրտությունից (այսինքն՝ ընտրանքի սխալից),
- բ) առաջադրված հավանականությունից (t),
- գ) ընտրանքի համասեռության աստիճանից (նույն ընտրանքն է, նույնատիպ կենսաոճը, վարքի դրսևորումները):

Նկարագրվում է այցելուների հոգեբանական անհանգստությունների նախնական վիճակը, որը պարզվել է Գոլոմբոգրաստի քսանութ հարցից բաղկացած հարցաշարով:

Երկրորդ՝ «Սեռական խնդիրներ ունեցող կանանց ինքնագնահատականի ուսումնասիրման ընթացքը և հիմնական արդյունքները» ենթազխում ուսումնասիրվել է կանանց ինքնագնահատականը: Սպիլբերգերի մեթոդիկայով ուսումնասիրվել է ռեակտիվ տազնապայնությունը և անձնային տազնապայնությունը:

Երրորդ՝ «Սեռական խնդիրներ ունեցող կանանց ագրեսիայի ուսումնասիրման ընթացքը և արդյունքները» ենթազխում, Բասս և Մարկ Փերրիի ագրեսիայի ախտորոշման մեթոդիկայով, հետազոտվել է կանանց ագրեսիայի դրսևորումները՝ (ֆիզիկական ագրեսիա, խոսքի ագրեսիա, զայրույթի ագրեսիա, թշնամանքի ագրեսիա):

Չորրորդ՝ «Կանանց բազմագործոն ուսումնասիրման ընթացքը և արդյունքները» ենթազխում ուսումնասիրվել է կանանց անձնային առանձնահատկությունները: Հավաստող գիտափորձի արդյունքների հիման վրա արձանագրվել է, որ տվյալների միջև գոյություն ունեն որոշակի դրական կապեր, այսինքն՝ մեկ գործոնի աճն իր հետևից բերում է այլ գործոնների աճի, մինչդեռ կան գործոններ, որոնք հակադարձ կախվածության մեջ են ուրիշ գործոններից: Ներկայացնենք այդ կապերի առկայությունը. ա) դրական իմաստով կապեր բացահայտվել են հեշտոցային կծկումների ցավերի և սեռական հակվածություն չունենալու, սեռական հարաբերության և սեռական հարաբերությունից խուսափման միջև, բ) սեռական հարաբերության հաճախականության և սեռական հակվածություն չունենալու, սեռական հարաբերությունից խուսափման միջև գոյություն ունեն դրական կապեր, գ) հեշտոցային կծկումների ցավերը բացասական իմաստով կապվում են կնոջ զսպվածության և արտահայտչականության հետ, դ) սեռական հարաբերությունը բացասական իմաստով կապվում է կնոջ ինտելեկտի և հուզական կայունության հետ (C գործոն), ե) օրգազմին չհասնելը բացասաբար է անդրադառնում, զիջողականություն- դոմինանտություն գործոնի հետ (E գործոն), զ) սեռական հարաբերությունից բավականություն չստանալը բացասաբար է անդրադառնում, պարփակվածություն-շփվողականություն (A) գործոնի և ինքնավստահություն-տազնապայնություն (O) գործոնի հետ, է) սեռական հարաբերությունից խուսափումը բացասաբար է անդրադառնում հուզական կայունություն-անկայունություն (C) գործոնի վրա:

Երրորդ՝ **«Ձևավորող գիտափորձի նպատակը, մեթոդները, ընթացքը և արդյունքները»** գլխում քննարկվել են հետևյալ հարցերը. ա) աշխատանքում կիրառված մեթոդները և դրանց հիմնական վերլուծությունը, բ) հոգեբանական ընդհանուր բնույթի խմբային աշխատանքներն այցելուների հետ, գ) անհատական-խորհրդատվական հանդիպումներն այցելուների հետ, որոնք արտացոլվել են ենթագլուխներում:

Կանանց հետ տարվող աշխատանքները բաժանվել են 2 հիմնական խմբի՝ նկատի ունենալով այն, որ սեռական անբավարարվածության խնդիրներ ունեցող իրանցի կանայք գրեթե ունեն միևնույն հոգեբանական խնդիրները: Դրանք են՝ ա) հոգեբանական աշխատանքներ, որոնք ընդհանուր բնույթի են, այսինքն՝ վերաբերում են ուսումնասիրվող բոլոր անձանց, բ) խնդիրներ, որոնք ունեն զուտ անհատական և հոգեբանական դրսևորումների երանգներ:

Երկու դեպքում էլ իրանցի կանանց հետ անցկացվել են նպատակամետ զրույցներ և հարցումներ: Զրույցները և հարցումներն անցկացվել են՝ ըստ Գոլոնբոգրաստի հարցարանի տրամաբանության՝ նկատի ունեալով փորձարկվողներին ուղղված հարցերի մշակվածության ու հիմնավորվածության աստիճանը: Հաշվի առնելով նաև Գոլոնբոգրաստի հարցարանի հավաստիության աստիճանը, նպատակահարմար ենք գտել փորձարկվողներին նախապես ծանոթացնել քննարկվող բնագավառին: Նկատի ունենալով նախկինում ուսումնասիրված անձանց հետ կատարած հոգեբանական հետազոտությունները, որոնք վերաբերում էին սեռական հարաբերությունների դրսևորման այնպիսի գործոններին, ինչպիսիք են՝ անհանգստությունը, զայրույթը, նյարդային խնդիրներն ու դեպրեսիան՝ ընտրել ենք Քեթթելի հարցարանը, Սպիլբերգերի, Բասի և Մարկ Փերիի հարցարանները, որպեսզի ճշգրտենք ու հաստատենք անհանգստության, հուզական առանձին վիճակների, զայրույթի, ագրեսիայի դրսևորումներն ու տարաբնույթ գործոնները: Հարցարանների միջոցով պարզել ենք վերոնշյալ գործոնների համաժամանակյա ազդեցությունը:

Սպիլբերգերի, Քեթթելի, Բասի հարցարանների արդյունքների մշակման ընթացքում առանձնացրել ենք նկարագրված գործոնների միջինացված տվյալներից օգտվելու գաղափարը, քանի որ մեր փորձարկվողները սեռական անբավարարվածության խնդրում ունեն համանման պատկերացումներ, վարքի դրսևորումներ, հուզական նույնատիպ ապրումներ: Փորձարկվողների նախնական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մեր փորձարկվողները միջին կրթվածության են, ենթարկվող են և միևնույն իրավիճակում ամուսնու հետ ունեցած հարաբերություններում դրսևորում են անհանգստության, զայրույթի և «տանջվածության» բարձր աստիճան: Մեծամասամբ ինքնամփոփ մարդիկ են և նրանց զգայունակությունն ու կախվածությունն ամուսնուց բարձր մակարդակի վրա է: Կային կանայք, ովքեր այս կամ այն չափով վստահում են

այլ մարդկանց, սակայն կիրառված մեթոդներով ստացած միջինացված արդյունքներից պարզվեց, որ նրանք նյարդային և զայրացած են: Սպիլբերգերի և Խանինի ինքնագնահատականի սանդղակի վերլուծությունից պարզվեց, որ նրանք ներկա պահի դրությամբ և ընդհանուր տվյալների տեսանկյունով ունեն բարձր անհանգստության նշաններ: Մարկ Փերիի հարցարանով ուսումնասիրված զայրութի աստիճանը՝ ըստ խմբերի, առավելապես աճում է ցուցանիշների հետևյալ հերթականությամբ՝ 1) «թշնամական ագրեսիա», 2) «խոսքի ագրեսիա», 3) «ֆիզիկական ագրեսիա», 4) «զայրույթի ագրեսիա»:

Այսպիսով՝ սեռական անբավարարվածության խնդիր ունեցող կանայք իրենց անհատական առանձնահատկություններով հանդերձ, ունեն սեռական անբավարարվածության որոշակի ընդհանրություններ, որոնք ցույց են տալիս ինչպես խմբային, այնպես էլ՝ անհատական հոգեբանական աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը: Ըստ Սպիրմենի ռանգերի գործակցի՝ ցույց են տրվում ուսումնասիրվող կանանց կողմից գնահատվող Գոլոմբոգրաստի հարցարանի ցուցանիշներից արտածված կապերը, որոնք խմբային աշխատանքների կազմակերպման հիմք են ծառայել: Հանդիպումների ընթացքում իրականացված հոգեբանական խորհրդատվությունն օգնել է կանանց՝ ինչպես հոգեբանի, այնպես էլ միմյանց հետ քննարկելիս, անհրաժեշտության դեպքում նրանք ամուսիններին ցուցադրել են սեռական հարաբերությունների կարգավորմանն ուղղված տեսանյութերը, հոգեկան անհանգստության, տարաբնույթ ագրեսիայի դրսևորումներին վերաբերող նյութերը, որոնք ուղղված էին սեռական հարաբերությունների թյուր պատկերացումներին, սխալ մեկնաբանություններին, ինչպես հոգեբանի, այնպես էլ այցելուների՝ կողմից միմյանց ուղղված հարցադրումներով ու պատասխաններով: Անհատական աշխատանքի դեպքում իրանցի կանայք առանձնացրել են իրենց սեռական անբավարարվածության խանգարիչ գործոնները, որոնց թվում առանձնացվել են ա) երեխայից հեռու լինելը, երբ կինը վերադարձել է հայրական տուն, բ) ամուսնու աշխատանք չլինելու հարցը և այլն: Բոլոր դեպքերում կարևորությունը տրվել է այն հարցին, թե տվյալ կինն ի՞նչ ուղիներ է գտնում խանգարիչ գործոնների ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Մնացած դեպքերում հաղթահարվել են սեփական ամաչկոտությունը, համարձակությունը, բացասական մտքերից մասամբ կամ ամբողջությամբ հրաժարումը, օրվա կյանքով ապրելը, սեռական հարաբերությունների կարգավորումը:

Զորրորդ՝ **«Ստուգողական գիտափորձի նպատակը, ընթացքը և հիմնական արդյունքները»** գլխում կատարվել է ստուգողական գիտափորձ, որի նպատակն է պարզել սեռական անբավարարվածության խնդրի հաղթահարմանն ուղղված

խորհրդատվության արդյունավետությունն ամուսնական հարաբերությունների շտկման գործընթացում:


Գիտափորձի համակազմն ընտրվել է նույն կանանցից, որոնք մասնակցել են նախորդ բոլոր գիտափորձերին:

Չորրորդ գլխի առաջին՝ «Սեռական անբավարարվածությանը պայմանավորված հոգեբանական դժվարությունների հաղթահարման արդյունավետ ուղիների քանակական պարամետրերի ստուգում» ենթագլխում նկարագրվում է այցելուների հոգեկան բավարարվածության վերջնաարդյունքը:


Երկրորդ, «Իրանցի կանանց ինքնազնահատականի համարժեքությունը ամուսնական հարաբերություններում կազմավորված ինքնազգացողությանը» ենթագլխում մենք մեկ անգամ ևս անդրադառնում ենք Գոլոմբոգրաստի հարցաշարին կամ Գոլոմբոգրաստի մեթոդիկային, որի նպատակն էր պարզել, թե ինչ փոփոխություններ են արձանագրվել կանանց վերաբերմունքում և վարքագծում խմբային և անհատական հիմնական պարամետրերից հետո, քանի որ ստուգողական գիտափորձի տրամաբանությունը հիմնվում է այն պարզ դատողության վրա, որի էությունը ամրակայվում է ապացուցողական փաստերի մեջբերմամբ: Գոլոմբոգրաստի հարցաշարի տվյալները դասավորելով՝ ըստ «երբեք», «երբեմն», «հաճախ» «համարյա միշտ» և «միշտ» սանդղակների՝ ներկայացնենք վերջնական արդյունքները.

«երբեք» հաս. գիտ.	«երբեք» ստ. գիտ.	«երբեմն» հաս. գիտ.	«երբեմն» ստ. գիտ.	«հաճախ» հաս. գիտ.	«հաճախ» ստ. գիտ.	«համարյա միշտ» հաս. գիտ.	«համարյա միշտ» ստ. գիտ.	«միշտ» հաս. գիտ.	«միշտ» ստ. գիտ.
57	238	39	41	65	12	184	85	202	185
Միջին արդյունքներ									
2.85	11.9	1.95	2.05	3.25	0.6	9.2	4.25	10.1	9.25

Հավաստող և ստուգիչ գիտափորձի այս մասի համեմատությունը պատկերենք դիագրամի տեսքով:



Այժմ ներկայացնենք Սպիլբերգերի տազնապայնության փոփոխության ասստիճանը: 20 հետազոտվող կանանց ցուցանիշներից երևում է, որ 5 կին արտահայտել են անձնային տազնապայնության բարձր ցուցանիշ, 5 կին ունեն անձնային տազնապայնության չափավոր ցուցանիշ, իսկ 10 կին ունեն անձնային տազնապայնության ցածր ցուցանիշ:




Ցուցանիշների միջինացված արդյունքների տարբերությունը կազմում է 28.45, որը ցույց է տալիս անձնային տազնապայնության ցածր մակարդակ:

Ստուգողական գիտափորձի վերը բերված աղյուսակից և գրաֆիկից երևում է փոփոխությունների շարժմնաքանակը որը տեղի է ունեցել ուսուցողական ծրագրի ներդրումից հետո:


Ցուցանիշներ՝ ըստ տազնապայնության մակարդակի	Ռեակտիվ տազնապայնություն	կանանց թվաքանակը	Անձնական տազնապայնություն	կանանց թվաքանակը
ցածր	51-58,66	6	53-61	10
միջին	58.66-66,32	8	61-69	6
բարձր	66,32-73.98	5	69-77	5

Երրորդ՝ «Սեռական խնդիրներ ունեցող կանանց ագրեսիայի ուսումնասիրման արդյունքները» ենթազխում անդրադարձել ենք ֆիզիկական, վերբալ, թշնամանքի և զայրության ագրեսիայի դրսևորումներին՝ նկատի ունենալով, որ թվարկվածներն ավելի հաճախ են արտահայտվում ամուսնական և ընտանեկան հարաբերություններում: Ստորև ներկայացվում է աղյուսակ և դիագրամա, որում ցույց են տրվում ագրեսիայի ցուցանիշների համապատասխան փոփոխությունները հավաստող և ստուգիչ գիտափորձերի արդյունքում: Այդ տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջնական արդյունքում զայրության ագրեսիան նվազել է 49.20 տոկոսով, թշնամանքի ագրեսիան՝ 41.06 տոկոսով, խոսքի ագրեսիան նվազել է 45.08 տոկոսով, ֆիզիկական ագրեսիան նվազել է 44.5 տոկոսով:



Ազրեսիայի ցուցանիշների դիագրամա

Չորրորդ՝ «**Կանանց անձի բազմագործոն ուսումնասիրման ընթացքը և արդյունքները**» ենթագլխում ստուգիչ գիտափորձի միջոցով պարզվել է Քեթթելի 16 գործոնների և MD ինքնագնահատականի փոփոխությունները, որոնք իրենց արտացոլում են գտել դիագրամում, որում պարզորոշ երևում են թե փոփոխությունները, թե անփոփոխ մնալու իրողությունը:



Հինգերորդ՝ «**Ամուսնական կարգավիճակի բացահայտման ստուգողական գիտափորձի արդյունքները՝ ըստ Գոլոմբոգրաստի ամուսնական կարգավիճակի 2-րդ թեստի**» ենթագլուխը սեռական անբավարվածության կամ բավարվածության համալիր խնդիրն ուղղակիորեն կապում է այն իրողության հետ, թե որքանով են տվյալ ընտանիքում կայացել ամուսնական հարաբերությունները և որքանով են կանայք բավարարված իրենց ամուսինների հետ ունեցած տարաբնույթ հարաբերությունների: Նշանակում է, որ պետք են այնպիսի հարցադրումներ, որոնք ուղղակիորեն արտացոլեն ամուսնական հարաբերություններից ստացած դրական զգացումները՝ ուախությունը, հաճույքը և այլն: Մեր հետազոտության այս բաժնի համար ավելի փաստարկված ու առավել կիրառելի համարեցինք Գոլոմբոգրաստի հարցաշարը:

Վեցերորդ՝ «**Կանանց սեռական բավարարվածության ընդհանուր վիճակի նկարագիրը արտացոլող անհատական հարցազրույցի արդյունքները**» ենթագլխում գործնականում պարզորոշ ցույց է տրվում, որ վերը նշած մեթոդների և ռեթեստավորման

արդյունքները մոտեցնում են մի կարևորագույն խնդրի բացահայտման՝ այն է, թե գործնականում ուսումնասիրված յուրաքանչյուր կնոջ ամուսինը և նրա ընտանիքի անդամները արդյո՞ք զգում և գնահատում են նրա ինչպես հուզական, այնպես էլ վարքի փոփոխությունները՝ նպաստելով ընտանեկան փոխհարաբերությունների նորմալացմանը:

Այս նպատակով հարցազրույցի միջոցով հատուկ ուսումնասիրվել է յուրաքանչյուր կնոջ ընտանիքը՝ նկատի ունենալով ընտանիքի ավանդույթները, սովորույթները, հարցազրույցին մասնակցած անդամների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Քանի որ երկրի առանձնահատկություններից ելնելով՝ չի կարելի ամուսնու հետ իր կնոջ մասին զրույցներ ունենալ նմանատիպ թեմաներով, ուստի հոգեբանն ընտրել է տվյալ ամուսնու հետ սերտ կապեր ունեցող որևէ անձի, որն ի վիճակի է ամուսնուց տեղեկանալ իր կնոջ ինքնավստահության, տագնապայնության, ինքնազգացողության, ագրեսիայի, անձնային որոշ որակների շատ թե քիչ փոփոխությունների և հատկապես սեռական բավարվածության և ինքնազգացողության մասին: Ատենախոսության մեջ բերվում են հարցազրույցի առանձին դրվագներ, որը կայացել է ստուգողական գիտափորձի ընթացքում:

Կանանց ռեթեստավորման արդյունքում պարզ է դառնում, որ փոխվել է նրանց սեռական հարաբերության մասին նրանց մտածելակերպը և դարձել է 95 %, սեռական հարաբերությունից հաճույք ստանալը դարձել է 90 %, ամուսնու և ընտանիքի անդամների հետ դրական հարաբերությունը՝ 80 %, սեռական հարաբերության հաճախականությունը՝ 75 %, հարաբերություններ (այդ թվում՝ սեռական հարաբերությունների մասին խոսելը)՝ 75 %, ամոթի և մեղքի զգացողությունը սեռական հարաբերությունների մասին խոսելուց դարձել է 65 %:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական վերլուծության և փորձարարական հետազոտության ամփոփումները հնարավորություն են տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

1.Սեռական անբավարարվածության հոգեծին գործոնները հնարավոր են փոփոխությունների ենթարկել՝ կապված սեռական կամ ընտանեկան հարաբերությունների դրսևորման, դրանց կայունացման և փոխադարձ ընդունելի զարգացումների հետ: Այս առումով էական դեր են կատարում սեռական անբավարարվածության խնդրի նախադրալային, բացահայտման, պահպանողական և փոխադարձ ընդունելի հարաբերություններին վերաբերող գործոնները, որոնք ընտանեկան պայմաններում, միաժամանակ գործելու պարագայում ազդում են կնոջ ինքնազգացողության, նրա գոհունակության կամ ընդհակառակը՝ սեռական

անբավարարվածության դրսևորումների վրա: Հետևաբար, այդ գործոնների սուբյեկտիվ ընկալումները կարելի է ուղղորդել, ընդլայնել և խորացնել այնպես, որպեսզի դրանք ընտանեկան պայմաններում դրական ազդեցություն ունենան սեռական բավարարվածության խնդրի արդյունավետ լուծմանը միտված ուղիների բացահայտման գործընթացի վրա:

2. Իրանցի կանանց հետ անցկացված սեռական անբավարարվածության խնդրին ուղղված հարցումները և նրանց հետ անցկացված հավաստող գիտափորձերը ցույց են տալիս, որ սեռական անբավարարվածության հիմնական բնութագրիչները (հեշտոցային կծկումներ, սեռական հարաբերություններից խուսափում, սեռական հարաբերությունների հաճախականություն և սեռական հաճույքի գազաթնակետին հասնել) համահարաբերակցական առումով կապված են միմյանց հետ, որոնք համադրվում են կնոջ ինքնագնահատականի, զայրուքի, մեղքի զգացողության, կասկածանքի և թշնամանքի վարքային դրսևորումների հետ: Հաստատվել է, որ հոգեծին գործոնների միջև գոյություն ունեն որոշակի դրական կապեր (ուղիղ համեմատական), միմչդեռ կան գործոններ, որոնք հակադարձ կախվածության մեջ են ուրիշ գործոններից:

3. Անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվության ընթացքը ցույց է տալիս, որ մտերմությունը ամուսնու հետ, շփվողականությունը, հուզական կայունությունը էապես նպաստել են փոխադարձ վստահության աճին, շփվողականությանը, կանայք իրենց ամուսինների հետ ավելի վստահ են քննարկում իրենց սեռական դժվարությունների հաղթահարման գործընթացները, որոշակիորեն ավելանում է իրենց սեռական հակվածությունը ամուսնու նկատմամբ, նվազում են ագրեսիայի ցուցանիշները, կարողանում են տունը ամուսնու հետ կարգավորել իրենց սեռական կյանքը և լուծել իրեն յուրահատուկ սեռական խնդիրները:

4. Էական տեղաշարժեր են նկատվում ռեթեստավորման արդյունքում սեռական հարաբերություններին, դրանց հաճախականությանը, սեռական հարաբերություններից բավականություն ստանալուն, օրգազմին հասնելուն, գործոնների ազդեցության նվազմանը, երբ բարձր արտահայտվածությամբ խանգարիչ գործոնները իրենց ազդեցությամբ վերածվել են միջին կամ ցածր արտահայտվածությամբ, որոնք դրական ազդեցություն են ունեցել սեռական բավարարվածության ինքնագնահատության վրա:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. Փեյմանեհ Ն.Ս., Իրանցի կանանց սեռական խնդիրներով պայմանավորված հոգեբանական դժվարությունները, Հոգեբանությունը և կյանքը, Ջանգակ 97, թիվ 3-4, 2010 թ. էջ 97-101:

2. Փեյմանեհ Ն.Ս., Կանանց սեռական անբավարարվածության տարաբնույթ պատճառների վերլուծություններ, Հոգեբանությունը և կյանքը, Ջանգակ 97, թիվ 1-2, 2011թ. էջ 92-102

3. Փեյմանեհ Ն.Ս., Իրանցի կանանց սեռական խնդիրների ուսումնասիրության արդյունքները, Հոգեբանությունը և կյանքը, Ձանգակ 97, քիվ 3-4, 2011 թ. էջ 96-102
4. Peimaneh Nemati, The Effective of Cognitive Behavioral Counseling on Degree of Women with Sexual Dysfunction, Journal of American Science 2012:8(2), 15 100-104
5. Peimaneh Nemati, Karapetyan V., Seyedreza Haghi, The Effect Of Cognitive-Behavioral Couneseling On The Level Of Anxiety In Woman With Sexual Dysfunction, Life Science Journal, 2012; 9(2); pp. 678-681

НЕМАТИ ПЕЙМАНЕ МОАМАДДИ
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ОБУСЛАВЛИВАЮЩИЕ ПОВЕДЕНЧЕСКИЕ
ПРОЯВЛЕНИЯ ЖЕНЩИН С СЕКСУАЛЬНОЙ НЕУДОВЛЕТВОРЕННОСТЬЮ
(НА ПРИМЕРЕ ИРАНСКИХ ЖЕНЩИН)

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – «Теория и история психологии».

Защита диссертации состоится 28 декабря 2012г. в 14⁰⁰ на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им.Х.Абовяна, по адресу: 0010,Ереван,Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Цель исследования. Выявить воздействие психологических факторов, обуславливающих половую удовлетворенность поведение женщин Ирана.

Объект исследования как разрыв семейных и брачных отношений, обусловленных воздействием факторов психологических аспектов половой удовлетворенности, так и регулированием половых отношений посредством психологических консультаций.

Предметом исследования являлись различные процессы одновременного действия психологических факторов полового удовлетворения в условиях активации регулирования половых отношений.

Гипотеза исследования. Предполагается, что, в зависимости от психологических факторов, проявления и представления полового удовлетворения у иранских женщин специфичны:а) обуславливается одновременным воздействием акцентирования личного характера в семейных условиях проявлением встревоженной ситуации, физически, словесно, гнева и враждебности, выражением агрессии,б) личные факторы взаимосвязанные с характеристиками женской половой удовлетворенности: вагинальные сокращения, избегание половых отношений, частота характера половых отношений, достижение пика полового удовольствия,в) в области женщин удовлетворенных половым путем осуществляются целенаправленные психологические работы: за счет расширения представлений о половой жизни и прояснении отношений с мужьями, что по существу не только влияет на урегулирование половых отношений с мужем, но и поднятие самооценки.

Научная новизна диссертации. На основе теоретического анализа специальной литературы и результатов экспериментальных исследований выявлена направленность одновременного воздействия психогенных факторов сексуальной неудовлетворенности иранских женщин. Разработанные и внедренные ориентированные программы способствовали психологическим работам, проводимыми с женщинами, в результате которых были устранены или сведены к минимуму поведенческие проявления сексуальной неудовлетворенности женщин. Также были выявлены проявления возможных связей между сексуальной неудовлетворенностью и личностными особенностями иранских женщин. Были организованы индивидуальные и групповые консультации, направленные на активацию сексуальной удовлетворенности.

Теоретическое значение исследования. В кругу психологических теоретических и традиционных представлений пока еще полностью не прояснилась психологическая проблема сексуальной удовлетворенности, не зависимо от того, что существует множество сексопатологических и биологических подходов и предлагаемых решений.

Практическая ценность исследования. Практическое внедрение результатов исследования в консультационной деятельности психолога поспособствует значительному продвижению сексуальных отношений иранских женщин, влияя на их самочувствие и на разнородные составные части психического здоровья.

В первой главе **”Содержательный анализ психологической проблемы женской сексуальной неудовлетворенности”** обсуждаются следующие вопросы: а) фактические наблюдения различных причин женской половой удовлетворенности б) неосведомленность пар как важное проявление половой удовлетворенности, в) основные факторы возникновения женских половых проблем.

Во второй главе **”Цель, процесс и основные результаты подтверждающего эксперимента”** обсуждается: а) психологические проблемы иранских женщин, связанные с половой удовлетворенностью, б) процесс исследования самооценки женщин с половыми проблемами и основные результаты, в) процесс изучения агрессии женщин с половыми проблемами и результаты, г) процесс многофакторного исследования женщин и результаты.

В третьей главе **“Основные факторы возникновения женских половых проблем”** обсуждаются следующие вопросы: а) использованные в труде методы и их основной анализ, б) групповые психологические работы общего характера с посетителями, в) индивидуальные консультационные встречи с посетителями.

В четвертой главе **”Цель, процесс и основные результаты проверочного эксперимента”** обсуждаются следующие вопросы: а) проверка количественных параметров результативных путей преодоления психологических трудностей, обусловленных половой удовлетворенностью, б) полноценность самооценки персянок, самочувствия сформированного в брачных отношениях, в) результаты исследования агрессии у женщин с половыми проблемами, г) многофакторный процесс исследования субъекта женщин и результаты, д) результаты проверочного эксперимента выявления брачного статуса согласно 2-ому тесту брачного статуса Голомбограста, е) результаты индивидуального собеседования, отражающего описание общего состояния полового удовлетворения женщин.

По теме диссертации опубликовано пять научных статей.

PEIMANEH NEMATI

**CONDITIONALITY OF PSYCHOLOGICAL FACTOR OF WOMEN BEHAVIORS WITH
SEXUAL
DISSATISFACTION
(CASE STUDY OF IRANIAN WOMEN)**

Thesis for the degree of candidate of psychological sciences (PhD), specialty 19.00.01 - "Theory and history of psychology"

The defence of the thesis will be held at 14⁰⁰ on 28th december, 2012 at the session of the Special Board of philosophies and psychology 064 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian pedagogical State University after X.Abovyan, address: 0010, Yerevan, APSU, Tigran Metsi 17

The purpose of the study. Identify the psychological impact caused by sexual satisfaction, factors on the behavior of the women of Iran.

The object of study as the severance of family and marital relations due to the influence of factors of psychological aspects of sexual satisfaction and sexual activity through the regulation of counseling.

The subject of study various processes of simultaneous action of psychological factors of sexual satisfaction in the activation of regulating sexual relations.

The hypothesis of the study. It is assumed that, depending on the psychological factors, the manifestations and representations of sexual satisfaction among Iranian women specific:

a) is caused by the simultaneous effect of emphasizing personal expression in a family environment anxious situation, physically, verbally, anger and hostility, the expression of aggression, b) personal factors related to the characteristics of female sexual satisfaction: vaginal reduction, avoidance of sexual relations, the nature of the frequency of sexual relations, reaching a peak of sexual pleasure, c) in the area of women sexually satisfied implement targeted psychological work: by expanding the concept of sexuality and clarifying relationships with their husbands, which is essentially not only affects the resolution of sexual relations with her husband, and raising self-esteem. Study participants were converts to psychological counseling center (psychological intervention and psychological guidance) Tehran Islamic Republic of Iran 105 women, not with physical and mental disabilities. Of these, 20 were separated for further research.

Scientific novelty of the dissertation. On the basis of the theoretical analysis of special literature and results of experimental studies the orientation of simultaneous influence of psychogenic factors of a sexual dissatisfaction of the Iranian women is revealed. The developed and introduced focused programs helped the psychological works, with women as a result of whom behavioural manifestations of a sexual

dissatisfaction of women were eliminated or minimized. Also manifestations of possible communications between a sexual dissatisfaction and personal features of the Iranian women were revealed. During our work were organized individual and group consultations directed on activation of sexual satisfaction.

The theoretical value of research. In the circle of psychological theory and traditional yet to be fully clarified psychological problem of sexual satisfaction, regardless of the fact that there are many seksopatologicheskikh and biological approaches and proposed solutions.

The practical value of research. Practical implementation of the study results in psychological consulting activities will contribute significantly promote sexual Iranian women, affecting their health and the diverse components of mental health.

In the first chapter, **"A content analysis of the psychological problem of female sexual dissatisfaction"** discusses the following issues: a) the actual observations of various causes of female sexual satisfaction b) lack of knowledge of pairs as important manifestation of sexual satisfaction, and c) the main factors of female sexual problems.

In the second chapter, **"The purpose of the process and the main results of the experiment confirming"** is discussed: a) the psychological problems of Iranian women related to sexual satisfaction, b) the process of self-study of women with sexual problems and the main results, and c) the process of learning aggression women with sexual problems and results, d) process multivariate study of women and results.

In the third chapter, **"The main factors of female sexual problems,"** discusses the following questions: a) used in the work, and their primary analysis, b) the group of psychological general with visitors, c) individual consultation meetings with visitors.

In the fourth chapter, **"The purpose of the process and the main results of verification experiment"** discusses the following questions: a) verification of the quantitative parameters of effective ways to overcome psychological difficulties due to sexual satisfaction, and b) the usefulness of self persyanok, being formed in the marital relationship, and c) a study of aggression in women with sexual problems, d) a multifactorial process research subject of women and the results e) results of verification experiment to identify marital status under the second test Golombograsta marital status, e) results of individual interviews, reflecting a general description of the state of women's sexual satisfaction.

On the topic of the thesis were published five scientific articles.